18
ՀՈՒԼԻՍԻ
2020

Luys Lnyu®

# ՆՈՐ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ (COVID-19) ԵՎ ՄԱՐԴՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻՆ ՆԵՏՎԱԾ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐԸ

# ՆՈՐ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ (COVID-19) ԵՎ ՄԱՐԴՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻՆ ՆԵՏՎԱԾ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐԸ

Նոր կորոնավիրուսային հիվանդության (COVID-19, այսուհետ՝ վարակ) տարածումը լուրջ մարտահրավեր է նետել մարդու իրավունքների պաշտպանությանը: Ինչպես նշել է ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Անտոնիո Գուտերեշը. «Հանրային առողջապահության ոլորտում արտակարգ իրավիճակն արագորեն վերածվում է մարդու իրավունքների ճգնաժամի»[1]:

Պետությունները վարակի տարածումը կանխելու և հանրության առողջությունը պաշտպանելու նպատակով ձեռնարկել են մի շարք արտակարգ միջոցառումներ: Այդ միջոցառումների շրջանակներում, ի թիվս այլոց սահմանափակվել են նաև մարդու մի շարք հիմնական իրավունքներ՝ ազատ տեղաշարժվելու իրավունքը, հաղորդակցության ազատության և գաղտնիության իրավունքը, հավաքների ազատությունը և այլն: Վարակի անսպասելի տարածումը և իրավիճակի աննախադեպ բնույթը ստիպեց պետություններին ձեռնարկելու հապճեպ կանխարգելիչ միջոցառումներ: Այս համատեքստում հետին պլան մղվեցին մարդու հիմնական իրավունքներն ու դրանց սահմանափակմանը ներկայացվող պահանջները: Սակայն, եթե համավարակի սկզբնական շրջանում կարելի է ասել, որ մարդու իրավունքները ժամանակավորապես զոհաբերվեցին օպերատիվ որոշումներ ընդունելուն, ապա նման պրակտիկայի շարունակականությունը լուրջ մարտահրավեր է մարդու իրավունքների ողջ հայեցակարգին: Խնդիրն առավել է սրվում՝ հաշվի առնելով, որ արտակարգ իրավիճակի պայմաններում իշխանությունը կենտրոնանում է կառավարության, շատ հաճախ՝ նույնիսկ մեկ անձի ձեռքում: Չեն կիրառվում հանրության լայն շերտերի ներգրավմամբ խորհրդակցությունների, հասարակական կարծիքը լսելու հնարավորություն տվող այլ մեխանիզմները: Ներկայումս, սակայն, երբ աշխարհը

[1] António Guterres, We are all in this Together: Human Rights and COVID-19 Response and Recovery, 23 April 2020, https://www.un.org/en/un-coronavirus-communications-team/we-are-all-together-human-rights-and-covid-19-response-and (այցելվել է 15.07.2020թ.):

որոշ չափով արդեն «հարմարվել է» վարակին, «գործադիր իշխանության ժամը» մեծ վտանգներ է պարունակում:

Չէ՞ որ ցանկացած քաղաքակիրթ և իրավական պետության մեջ մարդը բարձրագույն արժեք է, իսկ մարդու իրավունքները հարգելն ու պաշտպանելը՝ պետության գոյության առանցքային նպատակ և պարտականություն (ՀՀ Սահմանադրություն, հոդված 3, մաս 1): Հանրային իշխանության բոլոր մարմինները կաշկանդված են մարդու հիմնական իրավունքներով և ազատություններով (ՀՀ Սահմանադրություն, հոդված 3, մաս 3), ուստի նույնիսկ արտակարգ դրության պայմաններում հիմնական իրավունքների սահմանափակմանը պետք է վերաբերել ծայրաստիճան զգուշությամբ:

Այս է պատճառը, որ տարբեր երկրների իրավագիտական հանրության շրջանակներում լուրջ քննարկման առարկա են դարձել այն հարցերը, թե որքանո՞վ էին անհրաժեշտ վարակով պայմանավորված՝ մարդու հիմնական իրավունքների սահմանափակումները, եթե անգամ անհրաժեշտ էին, ապա ի՞նչ ժամանակով և ի՞նչ ծավալներով: Մասնագիտական լեզվով ասած՝ քննարկման թեման, նախ և առաջ, հիմնական իրավունքների սահմանափակման համաչափության և որոշակիության հարցն է: Սահմանափակումների իրավաչափության գնահատումը մի շարք երկրներում դարձել է նաև դատարանների գնահատման առարկան:

Հաշվի առնելով վարակի տարածման դեպքերը՝ 2020թ. մարտի 16-ից Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում հայտարարվեց արտակարգ դրություն[2], որը շարունակաբար երկարաձգվել է, այս պահին՝ մինչև 2020թ. օգոստոսի 12-ը[3]: Հայաստանի Հանրապետությունում հայտարարված արտակարգ դրության ընթացքում կիրառվել են մի շարք սահմանափակումներ, որոնք միջամտում են մարդու և քաղաքացու հետևյալ հիմնական իրավունքներին՝

- անձնական ազատության իրավունք (ՀՀ Սահմանադրություն, հոդված 27),
- հաղորդակցության ազատության և գաղտնիության իրավունք (ՀՀ Սահմանադրություն, հոդված 33),
- ազատ տեղաշարժվելու իրավունք (ՀՀ Սահմանադրություն, հոդված 40),
- հավաքների ազատության իրավունք (ՀՀ Սահմանադրություն, հոդված 44),
- սեփականության իրավունք (ՀՀ Սահմանադրություն, հոդված 60):

Նշված հիմնական իրավունքներից թերևս ամենից խիստ և երկարատև միջամտությունը տեղի է ունեցել հավաքների ազատության իրավունքի նկատմամբ,

[2] Ընդունվել է ՀՀ կառավարության կողմից 16.03.2020 թ., ՀՀՊՏ 2020.03.16/ Հատուկ թողարկում 257.5, N 298-Ն:
[3] Ընդունվել է ՀՀ կառավարության կողմից 13.07.2020 թ., Միասնական կայք 13.07.20-26.07.20, N 1161-Ն:

քանի որ արտակարգ դրություն հայտարարելու օրվանից մինչ օրս նշված իրավունքն ամբողջությամբ սահմանափակված է: Սակայն այս իրավունքը առանցքային և հիմնարար նշանակություն ունի ժողովրդավարական պետությունում, քանի որ հանդիսանում է մարդ-պետություն հարաբերություններում հաղորդակցության և իշխանության միակ աղբյուրի՝ ժողովրդի կամքն ու ցանկությունները պետությանը հասցնելու կարևորագույն մեխանիզմներից մեկը: Այդ իսկ պատճառով, արտակարգ դրությամբ պայմանավորված՝ մարդու հիմնական իրավունքների սահմանափակումները ստորև կներկայացնենք հենց հավաքների ազատության իրավունքի սահմանափակման իրավաչափության տեսանկյունից: Սակայն նույն սխեման կարող է կիրառելի լինել ցանկացած այլ հիմնական իրավունքի սահմանափակման պարագայում:

- *Հարց 1. Ի՞նչ պարտականություններ ունի պետությունը մարդու իրավունքների նկատմամբ.*
- *Հարց 2. Ի՞նչ իրավաչափ նպատակ կարող է հետապնդել հիմնական իրավունքների սահմանափակումը.*
- *Հարց 3. Հիմնական իրավունքների սահմանափակման ի՞նչ միջոցներ կարող են կիրառվել հետապնդվող նպատակին հասնելու համար:*

- **ՀԱՐՑ 1. Ի՞ՆՉ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՆԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ**

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը պետությանը պարտավորեցնում է մի կողմից՝ «**հարգել**», իսկ մյուս կողմից՝ «**պաշտպանել**» մարդու հիմնական իրավունքները և ազատությունները (հոդված 3, մաս 2): Այսինքն, մի կողմից՝ պետությունը պետք է զերծ մնա մարդու հիմնական իրավունքներին և ազատություններին անհամաչափ միջամտելուց (հարգելու պարտականություն), իսկ մյուս կողմից՝ պետությունը պետք է հանդես գա որպես հիմնական իրավունքները երաշխավորող և ակտիվ գործողություններ ձեռնարկի այս ուղղությամբ (պաշտպանելու պարտականություն):

Մարդու հիմնական իրավունքների պաշտպանության և դրանց նկատմամբ անհամաչափ միջամտությունը բացառելու համար Սահմանադրությամբ դրված են որոշակի պահանջներ, որոնց պահպանման դեպքում միայն հիմնական իրավունքներին միջամտությունը կարող է համարվել Սահմանադրությանը համապատասխան: Այդ պահանջներ են՝

- օրենք ընդունելիս օրենսդիրը կարող է հետապնդել միայն Սահմանադրությամբ սահմանված նպատակ,

- հետապնդվող նպատակին հասնելու համար ընտրված միջոցը պետք է լինի պիտանի, անհրաժեշտ և համաչափ (համաչափության սկզբունք, Սահմանադրության 78-րդ հոդված),
- օրենքի փաստակազմը և իրավական հետևանքը բովանդակային տեսանկյունից պետք է լինեն այնքան որոշակի, որ հնարավորություն տան հիմնական իրավունքի կրողին և հասցեատիրոջը՝ դրսևորելու համապատասխան վարքագիծ (որոշակիության սկզբունք, Սահմանադրության 79-րդ հոդված):

- **ՀԱՐՑ 2. Ի՞ՆՉ ԻՐԱՎԱՉԱՓ ՆՊԱՏԱԿ ԿԱՐՈՂ Է ՀԵՏԱՊՆԴԵԼ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄԸ**

Նպատակի ճիշտ սահմանումը ունի էական նշանակություն. որքան լայն և ընդհանուր սահմանվի հետապնդվող նպատակը, այնքան հեղհեղուկ և բարդ է գնահատել դրան հասնելուն ուղղված միջոցների համաչափությունը:

Այս առումով, ստեղծված իրավիճակում կա որոշակի խնդիր՝ որոշելու համար Սահմանադրությամբ սահմանված այն նպատակը, որին հասնելու համար տեղի է ունենում միջամտությունը մարդու հիմնական իրավունքներին և ազատություններին:

Առավել հաճախ շրջանառվող թեզն այն է, որ նման սահմանափակումների նպատակը մարդկանց կյանքը փրկելն է[4]: Իշխանության ներկայացուցիչների մեկնաբանություններն էլ հանգում են նրան, որ կշեռքի մի նժարին դրված է մարդու կյանքը, իսկ մյուսին՝ մարդու իրավունքները: Այսպիսով փորձ է արվում ստեղծել մի իրավիճակ, որը կարդարացնի մարդու իրավունքի ցանկացած սահմանափակում, քանի որ Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է, և նրա կյանքի փրկության համար ցանկացած այլ իրավունք ենթակա է սահմանափակման:

Կարծում ենք, սակայն, որ անմիջական նպատակը ոչ թե մարդու կյանքն է, այլ՝ առողջությունը: Ավելի որոշակիացնելու դեպքում կարող ենք, նշել, որ նպատակը առողջապահական համակարգը գերծանրաբեռնվածությունից զերծ պահելն է, ինչն էլ թույլ կտա պատշաճ կերպով իրականացնել հանրության

[4] Ն. Փաշինյան, Եթե մարդկանց կյանքերը փրկելու այլ տարբերակ չեղավ, չի բացառվում, որ կրկին գնանք համընդհանուր սահմանափակումների, 26.06.2020 թ. https://armtimes.com/hy/article/191205 (այցելվել է 15.07.2020թ.), Ա. Միրզոյան, Քաղաքական մեծամասնությունն այս օրինագիծը կյանքի է կոչում իր հեղինակության հաշվին, բայց նպատակը կյանքեր փրկելն է, https://zh-cn.facebook.com/azatutyun/videos/255898305575973/ (այցելվել է 15.07.2020թ.), Ռ. Բադասյան, Արդարադատության նախարարար Ռուստամ Բադասյանն այսօր կառավարությունում ասուլիսի ժամանակ ևս մեկ անգամ հայտարարեց՝ իրենց նպատակը կյանքեր փրկելն է, https://www.azatutyun.am/a/30523711.html (այցելվել է 15.07.2020թ.):

առողջության պաշտպանությունը: Կյանքեր փրկելն այս դեպքում այն անուղղակի արդյունքն է, որին ուղղված են իշխանությունների կողմից ձեռնարկվող միջոցառումները: Նպատակի նման հստակեցումը, ինչպես արդեն նշեցինք, անմիջականորեն ազդում է նաև այդ նպատակին հասնելու համար ընտրված միջոցների համաչափությունը գնահատելու վրա, որին կանդրադառնանք հաջորդիվ:

- **ՀԱՐՑ 3. ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ Ի՞ՆՉ ՄԻՋՈՑՆԵՐ ԿԱՐՈՂ ԵՆ ԿԻՐԱՌՎԵԼ ՀԵՏԱՊՆԴՎՈՂ ՆՊԱՏԱԿԻՆ ՀԱՍՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ**

Անդրադառնալով Կառավարության կողմից ընտրված միջոցներին՝ նախ նշենք, որ նպատակին հասնելու համար կարող են միաժամանակ լինել մի շարք միջոցներ, որոնք նույնպես թույլ կտան հասնել ցանկալի արդյունքին: Համաչափության սահմանադրական սկզբունքի պահանջն է, սակայն, որպեսզի առկա բոլոր հնարավոր միջոցներից պետության կողմից ընտրվի այն, որը մարդու իրավունքներին և ազատություններին առավել քիչ միջամտություն է նախատեսում:

Սահմանադրության 76-րդ հոդվածը, իհարկե, արտակարգ դրության ժամանակ տալիս է հնարավորություն մարդու հիմնական իրավունքները և ազատությունները ժամանակավորապես կասեցնելու կամ լրացուցիչ սահմանափակումների ենթարկելու: Սահմանադրական նույն նորմը, միաժամանակ, պետությանը ներկայացնում է շատ կարևոր պահանջ, այն է՝ հիմնական իրավունքները և ազատությունները պետք է սահմանափակվեն **միայն այնքանով, որքանով դա պահանջում է իրավիճակը:** Սահմանադրական այս պահանջին համահունչ, «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքը սահմանում է, որ իրավունքների և ազատությունների թույլատրվող սահմանափակումները պետք է կիրառվեն բացառապես այն նպատակներով, որոնց համար նախատեսվել են, և **լինեն համաչափ՝ հիշյալ նպատակների համեմատությամբ (հոդված 10, մաս 1)**:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հարց է առաջանում, թե ինչու՞ Կառավարությունը չի փորձում հետապնդվող նպատակին հասնել ավելի մեղմ միջոցների օգնությամբ, ոչ թե արտակարգ դրության ռեժիմի ներդրումից ի վեր մինչ օրս սահմանափակված պահել Սահմանադրության 44-րդ հոդվածով երաշխավորված մարդու խաղաղ հավաքի իրավունքը:

Համաչափության սկզբունքի տեսանկյունից չափազանց կարևոր է, որ Կառավարության կողմից ընդունվեն որոշումներ, որոնք լինեն ճկուն և թույլ տան յուրաքանչյուր կոնկրետ դեպք գնահատել առանձին, այլ ոչ թե՝ լինեն կոշտ և անկախ հանգամանքներից բոլոր դեպքերի համար համընդհանուր լուծում նախատեսող մոտեցումներ սահմանեն:

Ընտրված միջոցի համաչափությանը ներկայացվող պահանջներն են՝

- պիտանիությունը,
- անհրաժեշտությունը,
- համարժեքությունը (միջոցի ողջամտությունը, միջոցի և նպատակի կշռադատումը):

Հետապնդվող նպատակին հասնելու համար միջոցը **պիտանի է** այն դեպքում, եթե այն թույլ կտա նպաստել այդ նպատակին հասնելուն: Տվյալ դեպքում կարող ենք եզրահանգման գալ, որ հավաքների արգելքը կարող է նպաստել վարակի տարածումը կանխելուն և դրանով իսկ՝ հանրության առողջության պաշտպանությանը: Հետևաբար, *ընտրված միջոցը պիտանի է:*

Ընտրված միջոցը (հավաքների իրավունքը ամբողջությամբ սահմանափակելը) կարող է **համարվել անհրաժեշտ**, եթե չկա ավելի մեղմ միջոց, որը նույնպիսի արդյունավետությամբ թույլ կտա հասնել լեգիտիմ նպատակի իրականացմանը: Նշվածի համատեքստում դիտարկենք այն իրավիճակը, որն այժմ առկա է Հայաստանի Հանրապետությունում:

Ներկայումս Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում արգելվում է հավաքների և գործադուլների կազմակերպումը, անցկացումը և դրանց մասնակցելը, սակայն, թույլատրելի է հանրային տրանսպորտի, առևտրի կենտրոնների և մի շարք այլ հանրային օբյեկտների աշխատանքը:

Ասվածը պատկերավոր ներկայացնելու համար բերենք մեկ օրինակ: Ռեստորանային բիզնեսի ներկայացուցիչները ( հանրային միջոցառումների[5] կազմակերպումը, անցկացումը արգելված է) կամ այլ անձիք, որոնք ցանկանում են իրենց բողոքի ձայնը բարձրացնել կամ որոշակի հարցի վերաբերյալ իրենց անհամաձայնությունը հայտնել իշխանության կողմից վարվող քաղաքականության վերաբերյալ, զրկված են հավաք կազմակերպելու հիմնարար իրավունքից: Միաժամանակ, սակայն, գործում են և բավական բազմամարդ են՝ հանրային տրանսպորտը, առևտրի կենտրոնները, սրճարանները և հանրային այլ օբյեկտները:

---

[5] Հանրային միջոցառումներ են 5 և ավելի անձանց մասնակցությամբ անցկացվող հետևյալ միջոցառումները՝
1) համերգները, ցուցահանդեսները, ցուցադրությունները, թատերական ներկայացումները և սպորտային, մշակութային, կրթական այլ միջոցառումները,
2) ժամանցային միջոցառումները,
3) տոնական և հիշատակի միջոցառումները, ներառյալ, բայց չսահմանափակվելով ծննդյան (տարեդարձի), հարսանյաց (նշանադրության), թաղման միջոցառումները:

Ողջամտորեն առաջանում է հարց. արդյո՞ք, Կառավարության կողմից հավաքների անցկացման արգելքը կարող է դիտվել համաչափ միջոց, երբ մյուս կողմից թույլատրելի է բազմամարդ մի շարք հանրային օբյեկտների գործունեությունը: Արդյո՞ք հավաքների ընդհանուր արգելքի փոխարեն հնարավոր չէ գտնել վտանգները նվազեցնող և հիմնական իրավունքին միջամտության առավել մեղմ միջոց՝ ողջամիտ հավասարակշռություն ապահովելով հավաքների ազատության հիմնական իրավունքի և վարակի դեմ պայքարում պետության հետապնդած նպատակների միջև:

Համանման խնդրի են բախվել նաև մի շարք այլ երկրներ:

*Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում* մի քաղաքացի, ցանկանալով անցկացնել հավաք, դիմել է քաղաքային իշխանություններին՝ թույլտվություն ստանալու համար: Քաղաքային իշխանությունները, սակայն, արգելել են հավաքի անցկացումը: Քաղաքացին քաղաքային իշխանության որոշումը բողոքարկել է վարչական դատարան, սակայն, հաջողության չհասնելով, դիմել է Դաշնային Սահմանադրական դատարան: Քաղաքացին Սահմանադրական դատարանին խնդրել է կայացնել նաև միջանկյալ որոշում (interim measure), քանի որ արդյունքում կարող է մարդու իրավունքներին անդառնալի վնաս պատճառվել: Դատարանը գտել է, որ մինչև հավաքների անցկացումը արգելելը իրավասու մարմինը պետք է հավաքի կազմակերպիչների հետ համատեղ գտնի փոխհամաձայնեցված լուծում: Դատարանը նշել է, որ քաղաքային իշխանությունները տվյալ դեպքում չեն իրականացրել գործի հանգամանքների անհատական ուսումնասիրություն և առանց հաշվի առնելու, թե արդյո՞ք, հավաքի մասնակիցների թվի պակասեցումը կամ հավաքի վայրի, տեղի և ժամի փոփոխությունը և հակահամաճարակային այլ միջոցների կիրառումը կարող էր վարակի տարածման վտանգն այն աստիճանի իջեցնել, ինչը թույլ կտար ապահովել հավաքների իրականացման իրավունքը: Դատարանը նաև չի ընդունել քաղաքային իշխանությունների այն պատճառաբանությունը, որ այդ ընթացքում քաղաքում կտրուկ աճել է վարակակիրների քանակը: Դատարանը գտել է, որ դա չի ազատում քաղաքային իշխանություններին ամեն դեպքում մինչև հավաքի անցկացումը մերժելը հավաքի կազմակերպիչների հետ քննարկել ամեն հնարավոր հակահամաճարակային միջոց, այդպիսով փորձելով գտնել հավասարակշռված միջոց, որը մի կողմից թույլ կտա կանխել վարակի տարածումը և մյուս կողմից կապահովի հավաքների անցկացման իրավունքը: Այսպիսով, Գերմանիայի Դաշնային Սահմանադրական դատարանը քաղաքային իշխանությունների հավաքը անցկացնելու վերաբերյալ որոշումը ճանաչել էր սահմանադրականությանը հակասող և հաշվի առնելով իր

արտահայտած իրավական դիրքորոշումները՝ առաջարկել էր կայացնել նոր որոշում[6]:

Կառավարության կողմից կիրառված սահմանափակումների, այդ թվում՝ նաև հավաքների իրավունքի սահմանափակման իրավաչափությանը անդրադարձել է նաև *Սլովենիայի սահմանադրական դատարանը*: Դատարանը գտել է, որ մարդու իրավունքների և ազատությունների նկատմամբ երկարատև միջամտության դեպքում անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել դրա համաչափության ստուգում, որը էականորեն կնվազեցնի մարդու իրավունքների և ազատությունների նկատմամբ անհամաչափ միջամտության վտանգը: Արդյունքում Սահմանադրական դատարանը պարտավորեցրել է Սլովենիայի կառավարությանը առնվազն 7 օրը մեկ գնահատել՝ արդյո՞ք առկա է սահմանափակումները նույն ծավալով պահպանելու անհրաժեշտությունը, թե՞ դրանց կրճատման կամ վերացման դեպքում էլ հնարավոր կլինի հասնել ցանկալի նպատակին[7]:

«Միջազգային համաներում» իրավապաշտպան կազմակերպությունը *Լեհաստանում* հակահամաճարակային սահմանափակումների վերաբերյալ հրապարակել է զեկույց[8], որտեղ անդրադարձել է նաև հավաքների ազատությանը: Կազմակերպությունը նշել է, որ պետությունների կողմից չպետք է կիրառվի հավաքների ընդհանուր արգելք (blanket ban), այլ յուրաքանչյուր հավաքի անցկացման հնարավորությունը պետք է քննարկվի առանձին, որպեսզի սահմանափակումները կիրառվեն միայն ըստ անհրաժեշտության և համաչափ ձևով:

Հատկանշական է, որ Լեհաստանի կառավարության կողմից որպես վարակի տարածման կանխարգելման միջոց 2020թ. մարտի 31-ից կիրառվել էր հավաքների ամբողջական արգելք, սակայն 2020թ. մայիսի 30-ից մինչև 150 հոգանոց հավաքները թույլատրելի են:

## ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ

Պետության պարտականությունն է՝ հարգել և պաշտպանել մարդու հիմնական իրավունքներն և ազատությունները: Վարակով պայմանավորված՝ հիմնական իրավունքների սահմանափակման լեգիտիմ նպատակը առողջապահական համակարգը գերծանրաբեռնվածությունից զերծ պահելն է,

---

[6] https://www.bundesverfassungsgericht.de/SharedDocs/Entscheidungen/DE/2020/04/qk20200417_1bvq0 03720.html, :

[7] Slovenia, Constitutional Court of the Republic of Slovenia (2020), Opravilna št. U-I-83/20, 16 April 2020:

[8] Amnesty International, POLAND: COVID-19 IS NO EXCUSE TO CRACK DOWN ON PROTESTS, index number: EUR 37/2421/2020, 29 May 2020, https://www.amnesty.org/download/Documents/EUR3724212020ENGLISH.pdf, (այցելվել է 15.07.2020թ.):

ինչն էլ թույլ կտա պատշաճ կերպով իրականացնել հանրության առողջության պաշտպանությունը: Նպատակի ճիշտ և որոշակի սահմանումը ունի էական նշանակություն և թույլ կտա գնահատել դրան հասնելուն ուղղված միջոցների համաչափությունը:

Սահմանադրությամբ նախատեսված իրավաչափ նպատակին հասնելու համար պետության կողմից ընտրված միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և համաչափ:

Հաշվի առնելով Սահմանադրության պահանջները, ինչպես նաև դիտարկելով միջազգային փորձը՝ կարող ենք հստակ ընդգծել, որ հավաքների իրավունքի ընդհանուր սահմանափակումը անհրաժեշտ և համաչափ միջոց չէ հանրության առողջությունը պաշտպանելու համար:

Պետությունը պարտավոր է իրականացնելու իրավիճակի պարբերական գնահատում, ինչպես նաև առանձին գնահատելու յուրաքանչյուր հավաքի անցկացման հնարավորությունը: Միայն այս դեպքում է հնարավոր գտնել հավասարակշռված մոտեցում, որը մի կողմից՝ թույլ կտա պաշտպանել հանրության առողջությունը, իսկ մյուս կողմից՝ իրականացնել պետության պարտականությունը, այն է՝ հարգել և պաշտպանել մարդու հավաքների իրավունքը:

*«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:*

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*